



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

13-րդ ապրիլի 2021թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ՄԽ-Ո-02

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ 06.12.2019թ. ԱՌԱՋԱՑԱԾ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՑԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ և 7-րդ կետերը՝ մրցութային խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Սահմանել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի 06.12.2019թ. առաջացած թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԼԻԱՆԱ ՂԱԼԹԱՂՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՐԻՆԱ ՓԻԼՈՅԱՆ

ՑԱՆԿ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ 06.12.2019Թ.
ԱՌԱՋԱՑԱԾ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ) մասնակցել ցանկացող անձն Ազգային ժողովի աշխատակազմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Մրցույթին մասնակցելու նպատակով դիմումատուի կողմից ստորագրված և Խորհրդին հասցեագրված դիմում, որը պետք է ներառի տեղեկություններ՝ դիմողի բնակության վայրի, հեռախոսահամար(ների)ի, էլեկտրոնային փոստի հասցեի, դիմումը ներկայացնելու օրվա, ինչպես նաև կից ներկայացված փաստաթղթերի և էջերի քանակի մասին.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) 3x4 սմ չափսի երկու գունավոր լուսանկար.

4) ինքնակենսագրություն, որը պետք է ներառի տվյալներ դիմողի ծննդյան ամսաթվի, ծննդավայրի, կրթության, աշխատանքային գործունեության, ընտանեկան կարգավիճակի մասին.

5) բարձրագույն կրթության առկայությունը հավաստող փաստաթղթ(եր)ի պատճեն(ները)ը.

6) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը (ատեստատ, դիպլոմի միջուկ և այլն).

7) առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) հավաստող փաստաթղթի պատճեն(ները)ը.

8) արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ.

9) բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ.

10) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ.

11) իրավատու մարմնի կողմից տրված փաստաթուղթ՝ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ.

12) իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթ դատվածություն չունենալու՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցված լինելու, քրեական հետապնդման բացակայության մասին.

13) գրավոր հայտարարություն՝ որևէ կուսակցության անդամ չհանդիսանալու մասին.

14) համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից օրենքով սահմանված անհրաժեշտ տվյալներ և այլ տեղեկություններ ստանալու մասին: